ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՅՈՒՆԸ ԾԾՈՂ ՏԶԵՐԸ

Վերջացավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը: Պլենումը գտավ, որ Հայաստանում թե՛ տնտեսական և թե՛ կուսակցական ու կուլտուրական գործերը գնում են շատ վատ, որ գյուղատնտեսությունը քայքայման վիճակում է, որ կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը կանգ է առել, որ կուսակցական, քաղաքական գիծը նորից շեղվել է մեր կուսակցության գլխավոր գծից: ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննելով այս բոլորը, վճռեց հանել քարտուղարի պաշտոնից Կենտկոմի քարտուղարներ Հ. Ամատունուն և Ստ. Ակոպովին:

Հայ ժողովրդի թշնամիները, դաշնակները, նացիոնալիստները, տրոցկիստները, թունավոր իժերը տարիներ շարունակ ծծել են հայ աշխատավոր ժողովրդի արյունը, բայց նրանց չհաջողվեց արյունաքամ անել տաղանդավոր ու հերոսական հայ ժողովուրդը, որովհետև մեծ Ստալինի արթուն աչքը միշտ ու անընդհատ հետևում էր դաշնակների լծից ազատագրված հայ ժողովրդի վերածնությանը, որովհետև մեծ առաջնորդի պաշտպանող ձեռքն անդուլ ղեկավարում էր մեր երկիրը, Խորհրդային մեծ Միության մյուս հանրապետությունների ու մարզերի հետ միասին, որովհետև մեզ առաջնորդում էր Լենինի-Ստալինի կուսակցության փողփողուն անմար դրոշը: Հայ ժողովրդին վնասելու, մեր երկրում կապիտալիզմը ռեստավրացիայի ենթարկելու, հակահեղափոխական տրոցկիստների, ֆաշիստ դաշնակների պլանները կատարելու վերջին փորձն արին մերկացված հակահեղափոխական Հ. Ամատունին, Ստ. Ակոպովը, Ա. Գուլոյանը, Խ. Մուղդուսին և մյուսները: Նրանք հանդիսացան նացիոնալիստ հակահեղափոխական Ա. Հովհաննիսյանի, Հ. Կոստանյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ա. Խանջյանի դավաճանական, գարշելի գործի շարունակողները: Ժողովրդի թշնամիներ Հ. Ամատունին, Ստ. Ակոպովը, Ա. Գուլոյանը, լավ յուրացնելով իրենց հակահեղափոխական ուսուցիչների մեթոդներն ու պրիոմները, ամեն կերպ աշխատեցին հակահեղափոխական տերրորիզմի, դաշնակիզմի, տրոցկիզմի դեմ պայքարելու ամպագոռգոռ ճառերի ու դիմակավորված խուճապի տակ, թաքցնել իրենց հակաժողովրդական, վնասարար դեմքը, դավաճանեցին Հայաստանի Կոմունիստական կուսակցությանը: Սակայն, ինչպես միշտ, այս անգամ նույնպես [illegible] մեր ուժեղ մեծ առաջնորդի խորաթափանց, անվրեպ միտքը, որը շատ շուտ տեսավ Հայաստանում գոյություն ունեցող նեխվածքը:

Խ[illegible]ն Հայաստանն իր [illegible]ականության ազգային [illegible] փայլուն հաղթանակներից [illegible]: «Միայն Խորհրդային Իշխանության գաղափարն է, որ խաղաղություն բերեց Հայաստանին և տվեց ազգային վերածննդի հնարավորություն» (Ստալին):

Այսօր մենք ականատես ենք մեր երկրի արդյունաբերական ձեռնարկությունների աճին, սոցիալիստական կոլտնտեսային դաշտերի բարձր բերքատվությանը, բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրայի ծաղկմանը: Շատ են փաստերը, նրանք պերճախոս են, նրանք վկայում են այն մասին, որ հայ բանվորը, հայ գյուղացին, հայ աշխատավոր ինտելիգենցիան անվերապահ կանգնել են Խորհրդային Իշխանության, Լենին-Ստալինի կուսակցության դրոշի տակ, որ նրանք ջանք չեն խնայում հասնելու նոր հաղթանակների, հասել են ու կհասնեն այդ հաղթանակներին:

Սակայն պետք է արձանագրել, որ դժբախտաբար, մեր նվաճումների չափն ու քանակն այն չէ, ինչ որ պետք է լիներ, եթե հայ ժողովրդի երդվյալ թշնամիները, դաշնակցական-տրոցկիստական իժերը չխանգարեին մեր ժողովրդի ստեղծարար աշխատանքին, եթե նրանք տարիների ընթացքում չվնասեին:

Խոշոր են այդ վնասարարության հետևանքները, վնասարարություն, որը շոշափել է մեր սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառները և, որը գալիս է դեռևս հակահեղափոխական Հայկազ Կոստանյանից: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ մեծ Ստալինի անմիջական ցուցմունքներով Միութենական Ժողկոմխորհն ամեն տարի տասնյակ, հարյուրավոր միլիոն ռուբլիներ է տրամադրում մեր երկրի բարգավաճման, նրա ծաղկման համար:

Ահա ձեզ «Սովպրեն» կաուչուկի կոմբինատը, հարյուրավոր միլիոն ռուբլիների համամիութենական նշանակություն ունեցող շինարարությունը, որը շնորհիվ վնասարարական ղեկավարության (Ն. Կուրսեկ), Կենտկոմում ծվարած նացիոնալիստական, տրոցկիստական ղեկավարության, այսօր կանգնած է պրովալի առաջ: Ի՞նչ պատահեց: Այնտեղ, Մոսկվայում, ԽՍՀՄ ժողկոմխորհն ամեն ջանք գործ է դնում, չի խնայում դրամ, միջոցներ, շինանյութ, այստեղ կաուչուկշինի ղեկավարները «նախագծերի բացակայության», «օբյեկտիվ» պատճառաբանության տակ, անցկացնելով իրենց վնասարարական պրակտիկան, ձախողման են ենթարկում Ս. Կ. «Սովպրեն»-ի շինարարությունը:

Ն. Կուրսեկը—Ս. Տեր-Գաբրիելյանի արբանյակը, Ստ. Ակոպովի մտերմավոր բարեկամը: Խոստանում էր ժողովրդին, մեր առաջնորդին, որ կաուչուկ կտանք ամենաուշը 1937 թվին, իսկ գործնականում ունենք այդ հսկայական ձեռնարկության քայքայված վիճակ, վնասարարություն, ձգձգում:

Ահա և մի ուրիշ օբյեկտ—Քանաքեռհէկը, որը Հայաստանի արդյունաբերական խոշոր օբյեկտներից է: Շնորհիվ հակահեղափոխական վնասարարներ՝ Տեր-Աստվածատրյանի, Մեյերի, և մյուսների, այսօր դրված է չափից դուրս ծանր պայմաններում, որտեղ աշխատանքներն ու կառուցումները տարվել են այն հաշվով, որպեսզի ցույց տրվի Քանաքեռգէսի, Սևան-Զանգի կասկադի ոչ «շահավետ» լինելը: Պարզապես ազգայնական, վնասարարական մի պրակտիկա, որ այսօր մերկացված է ու ջախջախված: Ստախանովյան շարժման անկումն էլ մի փաստ է վնասարարների գործունեության:

Հապա մեր գյուղատնտեսությունը: Հողժողկոմատում տարիներ նստած վնասարարները (Ս. Ցերցնկյանը, Ա. Գուլոյանը, Վ. Մամիկոնյանը, Գ. Գումեդինը) մեր գյուղատնտեսությունը հասցրել են քայքայման: Գյուղերի պլանավորման վնասարարական պրակտիկա, կոլտնտեսության կանոնադրության խախտումների շարան, ժողովրդական կոլտնտեսային գույքի հափշտակումներ, կոլտնտեսականների աշխատանքի [illegible] աշխօրերի գերածախսման միջոցով, աշխօրերի գինը [illegible] մթերքների ու դրամի քանակի իջեցման միջոցով, անասնաբուծության [illegible] ոչնչացում, անասունների անկում, կերի կորուստ և այլն: 1936 թ. տնտեսական տարին շնորհիվ ժողովրդի թշնամի Հ. Ամատունու և Ա. Գուլոյանի վնասարար ղեկավարության, տվել է գյուղատնտեսական աշխատանքների համարյա բոլոր գծերով պլանների թերակատարում (բերքահավաք, աշնանացան, կալսում, մթերումներ, բամբակ և այլն):

Ահա հակահեղափոխականների գործունեության արդյունքները:

Մեր հետամնացության [illegible] օրինակներ կարելի է բերել և կուլտուրական աշխատանքի բնագավառից: Դպրոցի կուլտուրական [illegible] գտնվում է խղճուկ վիճակում, դասագրքեր, ուսուցիչներ, [illegible], թատրոնը— չեն ապրում ծաղկման այն շրջանը, որ պետք է ապրեին նրանք Հայաստանում Խորհրդային Իշխանության հաստատման 17-րդ տարում, որովհետև և՛ Լուսժողկոմը, և՛ Ժողկոմխորհը մեր գյուղի կուլտուրական աճի խնդիրները դրել էին վերջին պլանի վրա:

Մեր աշխատավորության կուլտուրական [illegible] հետամնացությունից [illegible] և [illegible]: [illegible] կոոպերացիայի ձեռնարկությունները [illegible] տարիներ շարունակ [illegible]: [illegible] Ս. [illegible] կարել է [illegible]:

Մի շարք [illegible] վերջին տարիների ընթացքում Հայաստանի բյուջեն աճել է մի քանի անգամ: Սակայն ո՞ւր են գնացել այդ դրամները: Ժողովրդի թշնամիները վատնել են, խժռել, զրկելով մեր դպրոցական շինարարությունը, մեր կուլտուրական շինարարությունը, արդյունաբերությունը ֆինանսական միջոցներից: Հակահեղափոխական Ա. Գուլոյանը շարունակել է Խանջյանի ու Ս. Տեր-Գաբրիելյանի քաղաքականությունը ֆինանսների բնագավառում: